ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

N 26-27 06.03.2012թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
պարոն Գևորգ Հայրապետյանին
ՀՀ, ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 2012թ. փետրվարի 24-ի թիվ 156-ի 9 տեղեկատվություն ստանալու հարցմանը հայտնում եմ հետևյալը:

ՀՀ քաղաքացի Էդգար Հակոբյանը 2011թ. դեկտեմբերի 28-ին դիմել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն) խնդրելով պատասխանել մի շարք հարցերի, որոնց գործակալությունը պատասխանել է 2012թ. հունվարի 16-ին (կցվում է): Այնպես որ, իր պնդումն առ այն, որ բարձրացված հարցերի պատասխանները նա չի ստացել չի համապատասխանում իրականությանը:

Այնուհետև, 2012թ. հունվարի 25-ին գործակալությունը պարոն Հակոբյանից ստացել է մեկ այլ հարցում, որում ըստ էության կրկնվում են այն նույն հարցերը, որոնց Գործակալությունը պատասխանել էր 2012թ. հունվարի 16-ի պատասխան նամակում:

Պարոն Հակոբյանը հրավիրվել է Գործակալություն և նրան ասվել է, որ խնդրարկվող տեղեկատվության հիմնական մասը դա հրապարակված նյութեր են և նշվել են համապատասխան աղբյուրները: Սակայն նա ակընկալում էր ստանալ ոչ միայն տեղեկատվության աղբյուրները, այլ նաև ապրանքային նշանների փորձաքննության յուրահատկություններին վերաբերող՝ «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունված 29.04.2010թ, թիվ ՀՕ-59-Ն, ուժի մեջ է մտել

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ.՝ 563-267, Ֆաքս՝ 543-467
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

2010թ. հուլիսի 1-ից, այսուհետ՝ օրենք) և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (հաստատվել է ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ) համապատասխան հոդվածների և կետերի բովանդակությունը: Ինչը մեր կարծիքով չի բխում «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի դրույթներից:

Այնուամենայնիվ, հարգելով Ձեր միջամտությունն այս հարցում, ներկայացնում եմ այդ հարցերի պատասխանները, նշելով միայն օրենքի և կարգի համապատասխան հոդվածները և կետերը: Պատասխանները բերված են ըստ բարձրացված հարցերի հաջորդականության:

1. Օրենքի 8-րդ-11-րդ, 42-րդ, 43-րդ և 48-րդ հոդվածներ, ինչպես նաև կարգի 16-րդ- 182-րդ կետեր:
2. Օրենքի 40-րդ և 41-րդ հոդվածներ, ինչպես նաև կարգի 8-րդ - 15-րդ կետեր, 183-րդ - 198-րդ կետեր:
3. Օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներ:
4. Օրենքի 12-րդ-14-րդ հոդվածներ:
5. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մաս:
6. Մտավոր սեփականության բնագավառին վերաբերող միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ցանկը, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը բերված է գործակալության ինտերնետային կայքում՝ www.aipa.am: Կառավարությունների մակարդակով կնքվել և գործում են՝ Ռուսաստանի Դաշնության և Ղրղզստանի հետ պայմանագրերը: Կնքվել է նաև պայմանագիր ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Ռումինիայի արտոնագրային գերատեսչության միջև:

7-8. Այս հարցերի պատասխանները տրվել են 2012թ. հունվարի 16-ի նամակում:

7. 9. Օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն ապրանքային նշանի գրանցումը դատարանի վճռի հիման վրա անվավեր ճանաչվելու դեպքում՝ Գործակալությունը համաձայն «Ապրանքային նշանների պետական գրանցամատյանների վարման և քաղվածքների տրամադրման» կարգի (հաստատվել է ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ)

11–րդ կետի 2–րդ ենթակետի համապատասխան գրառում է կատարում ապրանքային նշանը պետական գրանցամատյանից հանելու վերաբերյալ:

10. Այո, ապրանքային նշանի անվավեր ճանաչելու մասին դատարանի վճիռը միակ հիմքն է դրա գործողությունը դադարեցնելու և ապրանքային նշանը պետական գրանցամատյանից հանելու համար:

Առդիր՝ 1 էջ:

Գործակալության պետ Ա. Ազիզյան